

42. ԳԱԶՊԱՐ

Ուռուսու թակավոր. ինան ուր վնզիր կէլնեն թաբլիղ կլըղի կմտնեն. կէրթան ուրենց երկիր ֆոալու: Կէրթան չուր Իրանա թակավրու երկիր:

Իրիկվա թարաֆ կխասնեն առտիմ մեչ. մարթմ ցախ կզանի, էն մարթուն կասեն. - Կիշերս մե կտանե՞ս մո քե խուր:

Կասի. - Ընչի՞ չեմ տանե. վեր իմ գլխուն: Կայնեքյ իմ ցախ տանեմ ծախեմ. գյամ ծե առնեմ էրթնմ:

Ցախ կծախե. կուգյա ֆոնից չորս խաց կառնի, կուգյա մարթերաց կառնի, կուգյա ուր տուն:

Չորս խացից մեյ կուտա ուր կնգյանն, մեկ զինքյ կուտի. մե-մե մեկէլ կուտա էն դնվրեշներաց:

Խաց կուտեն կպոծնեն. կքյնեն:

Առատուն կէլնեն կտիսնան ցախ զնրկողի կնիկ տղեմ ի պիրե, խե՛ղճ, շոր էլ չկա ինթյուրեն ինե:

Թակավորն ի տեղ-ջյուլ կուտա պիրել: Էն տղեն կուտա կնքյել. անուն կտնի Գնզպար. ինքյ կէլնի քյավոր: Խաչ նշանմ էլ կուտա ուր սանկեն նվեր:

Կէլնի էրթալու. մախսուս քյիսիկմ ոսկի կմոռնա էնտեն. կասի. - Ես Ուռուսու թակավորն եմ. էսա տղեն, որ կճեռճանն. էսա խաչ նշան առնի. գյամ զի կնդնի:

Ապա՝ ճնմբախ ինոր իրեքյ մարթ ռաստ կուգյան:

Ինոնցից իսկի ճյուր չուզի խմի, նն ուր ծիյուն. նն զինքյ խմի: Ինոնցից զնրնր կուգյա ինոր:

Ալնախ ոսկին կմնա ցախ զնրկողին: Ցախ զնրկող կկնդնի փնրեն, կառնի տանի, որ տա թակավոր. կասի. - Չէ՛, ես էն թողեր եմ իմ սանկեն:

Ցախ զնրկող էլ չէրթնմ ցախ զանել, կհարստանա:

Օրեր կընցնեն, լաճ կճեռճանն: Օրին մեկ լաճ կասի. - Մարե՛, ես իմ ընգյերներաց դնվմթ կուտամ. քյանիմ՛ տեսակ կեր իփի:

Մերն ի կեր կիփի. պատրաստութեն կտիսնա, լաճ կասի. - Մարե, իմ ինգյրներ. որ պիրեմ. մե ուրիշ ըսկուն ճարուստ. օրինավոր պնրեկամ չկա, գյան խետ իմ. ինգյրներաց խնբնր տա:

Կասի. - Որդի՛. մե պնրեկամ չկա: Աման մե մեյ խատ մարթմ կա, որ թակավոր ի. Ուռուսու թակավոր, որ քյո քյավորն ի:

- Է՞. մարե՛, իմ քյավոր աղեն զիկ իսկի նշանապնմ չտվե՞:

Կասի. - Բալա՛մ. մեյ խատ խաչ նշան տվե մո զի:

Տղեն ասաց. - Ես կէրթամ իմ քյավոր աղեն կկնդնեմ. տու իմ նշան. ես ճամբախ կինեմ:

Մեր նշանը կուտա. կասի. - Քյո քյավոր ասաց՝ ճամբախ իրեքյ մարթ ռաստ կուգյա, էն մարթերաց մոտեն չէլնեմ, չիմանամ. թե զինքյ, թե ուր ծին ճյուր ուզեն, խմեն: Ինոնցից բանլն կուգյա:

Լաճ ուր ծին խեծավ կնանց: Կնաց չոր դաշտիմ մեչ. ծարվցեր ի. առճի մարթ ռաստ էկավ: Լաճն ինոր պանմ չասեց:

Քիչմ էյ կնանց, էն մեկէլ մարթն էկավ էրնաց, ինորից էլ պամ չուզեց:

Քիչմ էլ կնանց՝ էն մեկէլ խալիվորն ռաստ էկավ: Շատ ծարվցեր էր, թե՛ զինքյ. թե՛ ուր ծին:

Ինքյ ուր ասաց. - Ըխթիա՛ր ի. ի՞նչ կուգյան իսորից, ես իսորից ճյուր պիտի ուզեմ:

Ասաց. - Պուրև քյե, բաբա՛լղ:

Խալիվորն քիչմ ջհելցավ. ասաց. - Աստծու պանրին, ի՞նչ կուզես:

Ասաց. - Ըստեղրանք ճյուր կա՞ խմելու:

Խալիվորն էլանվ քսանխինգ տարեկան կտրիճմ, նաջախն էլ ծեռ:

Ասաց. - Ըստա խոր կա. ինի տակ. խմի:

Լաճն էճանվ տակ. մտավ խոր. խմավ ճյուր: Էն ջհելն առե նաջախն կայնե վեր լաճու գյլխուն, կասի. - Դե՛. ասա. խենքյ տյու դեռ՞ր կէրթանս: Քյո անուն ի՞նչ ի: Ձասես՝ քյե կսպանեմ:

Լաճն ասաց. - Աստծու սիրուն մ՚սպանե. ես քյե կպատմեմ. - ասաց. - իմ անուն Գանզպար ի. ես էլ Ուռուսու թակավրու սանիկն եմ. իկեր եմ կէրթանմ մոտ իմ քյավոր:

Ասաց. - Էտա քյո թիվի վիրվի նշանն ի՞նչ ի:

Կասի. - Էն նշանն իմ քյավորն ի տվե:

Կասի. - Դե՛, տու զի. որ քյե չսպանեմ:

Լաճն ուր նշան առցկեց, իտուր էտսու մարթուն:

Մարթն ասաց. - Արե էրդյում արա, որ էսա պաներ քյո պենեն չէլնի. իմ անուն մնա Գանզպար. տյու էլնես իմ մշակ, քյո ծին էլ տաս ես խեծնեմ: Ձուր քյո մախ՝ մարթում չասես:

Լաճն էր էրդվանց: Էլավ տյուս խորից, տառցավ էտա մարթու մշակ. ծին իտուր ինոր կնանցին:

Խասան մո թակավոր, սութ Գանզպարին տարան պատվեցին, հարգեցին.*ի՞նչ արին Գանզպարի քյեֆ չպացվե:

Թակավոր ասաց. - Ես ինչխ անեմ, իմ իգյու խնձորներ, եմշներ ըստան էլներ. որ տյու տիսներ՝ զարմանիր, քյո քյեոֆ պանցվեր: Մկա յոթ ախպեր դևեր իկեր են իմ իգյին պոներ են. նստեր են:

Գանզպար ասաց. - Էն իմ մշայն կանա էրթան պիրե: Մախսուս ասաց թակավրուն. որ տղեն էրթեր էնտեղ կուրիսեր:

Էլավ մշակուն կանչեց, ասաց. - Պիտի էրթանս յոթ դևու ծեռնեն իգյին խլես, խնձոր պիրես թակավրու խամսուր:

Լաճն էլ լալելեն էլանվ տյուս. կնանց տեսավ, որ պառավմ գյեռ թուղթ կթալի. վիճակ կիրիշկա. էրկու-իրեքյ տղա ժողվոտվեր են մո պառավ՝ ուրենց թուխթ կիրիշկա:

Լաճն խառցուց ասաց. - Տղեյնե՛ր, մեյ վիճակ քյանի՞մ ի:

Ասին. - Տաս փանրա՝ ի մեկն:

---

* Երկու կոպեկ (Ծ.Բ.)

Ասաց. - Պառավ. վիճակմ էլ մի պռնի:

Պառավ վիճակ պռնեց. ասաց. - Տղա՛. տյու ուէրթաս յոթ դևու ծեռնեն իգյին խլես, տէրթաս յոթ դևու մեր գյեո պառկեր ի. ինոր ոտ փուշ էլե. ուռե: Կէրթաս ուշիկմ կալախկվես. կզմնես չախուով. ինոր ոտ կծակես: Էն գյախ ի՞նչ էն կճվա. չէլնես տյուս: Կա՛ց. չուր գլոխներ կէրթա, կխովնա. էլի տյուս, որ կասի՝ ի՞նչ կուզես, ուզի քյո նվեր. ասա՝ քյո լաճեռաց մոտեն կխնդրեմ էլնեն տյուս. էսա իգյին մնա գի:

Լաճն իտուր պառվու մաթալիկ. էլավ կնաց տեխ իգյին: Ննաց մտավ ավուզի մեչ: Գյախտիկ մոտացավ պառվու մոտ, չախուն իխան ինոր ոտի ուռուց ճղեց:

Պառավ մեղ ծենով պոռաց: Լաճն մտավ ավազանին մեչ, պախկվավ:

Ցարից արուն-գյոեխ փոթավ էկավ. խովցավ. պռծավ: Պառավն ասաց. - Էսա վո՞վ էր, թո տյուս էլնի:

Լաճն էլավ տյուս:

Պառավն ասաց. - Խողածի՛ն, ուզի քյո ուզած:

Լաճն ասաց. - Ես զմ չեմ ուզե, մենակ էսա իգյին կուզեմ:

Պառավն ասաց. - Թո՛ քյո ուզած ճամամն էտա էլնի:

Էլավ կերխում արաց, լաճուն կիրիցուց, խմցուց, պախեց ուր մոտ: Ցոթ դևեր ճմեն իրիկուն մեկ ախպեր կճամխեն տուն. որ գյեր ուրենց մոր վերեն խզմաթ աներ, կերակուր իփեր, մեր չէր կանե իրար տեպնե:

Պստիկ լաճ էն իրիկուն կուգյա տուն. կտիսնա, որ ի՞նչ, մեր խորտե. ավիլե. կեր խում իփե:

Կասի. - Մարե՛. էսա քյե վո՞վ ծրցուց:

Պստիկ լաճ կէրթա ախպերնէրաց խաբար կտանի:

Ախպերներ կուգյան տուն, կասեն. - Է՛, տղա, ուզի քյո ուզած տանքյ. քյանի որ տյու ըսկնա աղեկութեն արիր խե մե:

Կասի. - Ես կուզեմ էսա իգյին:

Դևերն ի էնգյախ ինե կէլնեն քյոաշվեն. իգյին կուտան ինոր:

Տղեն էլ էլավ խնձորներ. եմշներ առեց, ուրախ-ուրախ տարավ իտիր թակավրու տուն:

Սութ Գյոզպարն ի, որ տեսավ, սևսրտավ, մոթավ. նստավ էնտեղ:

Թակավոր ասաց. - Ես ի՞նչխ անեմ. որ իմ սանկի սիրտն առնեմ: Մկա իմ խազենի նմուշ-նմուշ ոսկեղեն պմներ ըստեղ չէլնե՞ր, որ իմ սանիկն ուրախներ:

- Ի՞նչ էլե քյո խնզինեն:

- Վիշապմ իկե նստե իմ խնզինի տռան վերեն, չթոնե մարթ մտնի ներս:

Գյոզպարն ուրախցավ: Ասաց. - Էն էլ իմ մշակու պմնն ի:

Թակավոր կանչեց մշկուն, ասաց. - Պիտի էրթաս իմ խնզինի վերվու վիշապն սպանես, խնզինեն պիրես:

Լաճն էլավ կնաց:

Կնաց էլմ մոտ էն վիճակի պառավ, ասաց. - Պառա՛վ, աստծու սիրուն, էս օր տյու զիկ բոյլեմ թոլե:

Պառավն էր բոյլեմ իթալ, ասաց. - Տղա՛, տյու պիտի էրթաս թակավրու խնզինեն պիրելու. էնտեղ վիշապմ կա, էսա յոթ տարի ի. էի խնզինեն զոփթե, նստե: Ամա՛ էն վիշապ քյո անունով ի զոփթե նստե, որ կէրթաս վեր դռան, քյո անուն. քյո խոր անուն տու՛. էն վիշապ կթողնի կէրթա, էն խնզինեն քյոն ի, մի վախենա:

Լաճ էլա̈վ կնա̈ց ուրախ-ուրախ:

Կնա̈ց խասավ մը վիշապ, ուր անուն իտուր, վիշապ քյա̈շվավ կնա̈ց: Տղեն կնա̈ց մտավ խա̈զինեն, թանկագին պա̈ներն առեց, տարավ իդիր թակավրու ա̈ռա̈ճ:

Սութ Գա̈զպար էլմ սևոտավ. ասաց ինքյն ուր՝ ես ասի էրթա̈ մը վիշապ. վիշապն ինոր ուտի. էսա էլմ էկա̈վ: Բոշ ի իմ հեռութեն պիտի խանի տյուս:

Էլմ մոթավ, նստավ էնտեղ. թակավորն ասաց. - Ես ի՞նչխ անեմ. Հինդի Ցամանա թակավրու ախչիկ մկա ըստա էլներ. փսակի վեր քյե:

Սութ Գա̈զպարն ասաց. - Էն իմ մշակն կանա պիրե:

Թակավոր կանչեց մշակուն, ասաց. - Պիտի էրթաս Հինդի Ցամանա թակավրու աղչիյն պիրես:

Լաճն էլավ տյուս: Կնա̈ց մոտ էլմ էն պառավ:

Ասաց. - Պառա՛վ. զիկ էլմ բա̈յլեմ թա̈լ, իմ դարդեր շատ են էսօր:

Պառավ բա̈յլեն իթա̈լ: Ասաց. - Տղա, տյու կէրթա̈ս Հնդի Ցամանա թակավրու աղչիկ կպիրես: Կնա մը թակավոր, ասա, թե՝ քյառսուն խատ աղչիկ, քյառսուն խատ երիտասարդ կուզես՝ բյություն մեկ հասակ էլնեն, քյառսուն խա պառավ, քյառսուն խատ խալիվոր՝ էլմ մեկ հասակ, քյառսուն խատ նաղարաչի, քյառսուն խատ զուռնաչի՝ զուռնեքյ բյություն ոսկի էլնեն, նաղարի պյուլլոր՝ ոսկի, ճպոտն ուր կոպալ՝ ոսկի: Ոսկի գյա̈մի կուտաս շինել, մեջն քյառսուն էօղա: Էն քյառսուն էօղի մեջ կլցես էդա ժողովուրդ, կէրթա̈ս: Գյա̈մու տսանց կկպրե: Կտանես էդա գյա̈մին, կխանես Հինդի Ցամանա թակավրու երկիր: Էդա քյառսուն ջահել ախչիկ էն քյառսուն ջահել երիտասարդ մեկ մեջ, մեկ մեջ կշարես, կկայնցուցես մեյդան: Էն քյառսուն պառավ խալիվորն էլ ըսկուն կշարես: Քյառսուն նաղարաչին, զուռնաչին կզա̈նեն, ինոնքյ կխաղան: Թակավրու աղչիկ կուգյա̈ քյո գյա̈մի գյեոնդ թամաշա անելու, կառնես կփախնես:

Լաճ էլա̈վ կնա̈ց մը թակավոր, էդա ամբողջ պա̈ներ մոտեն կուզի, կառնի կլցի գյա̈մին, կէլնի կէրթա̈:

Կէրթա̈, կէլնի Հինդի Ցամանա երկիր, թակավրու քյաղաքյի դեմ մեյդնի մեջ, ծովու պերան, մեկ մեջ լաճ-աղչիկ, խալիվոր-պառավ կշարի: Նաղարաչիքյ զուռնաչիքյ կզա̈նեն, ինոնք կխաղան: Լուր կէրթա̈ Հինդի Ցամանա թակավրուն, թե ըսնա̈ պա̈մ իկե մեջ քյո երկրին:

Թակավորն ի, կէլնի ուր կնգյա̈ն կասի. - Կէրթա̈մ թամաշա, աման իրեքյ սա̈հա̈թից վերջ կուգյա̈մ:

Թակավոր կէրթա̈: Իրեքյ սա̈հա̈թ կանե տաս սա̈հա̈թ՝ չի գյա̈ ըսկում որ խորոտ ի էդա գյա̈մին, ըսկում որ խորոտ կխաղան:

Կուգյա̈ տուն, կնիկ կխառցուցի, կասի. - Ընչի՞ ըսկնա̈ ա̈նգնցար:

Կասի. - Տյու որ էրթա̈ս, ես վա̈խենամ, ըսկում թա̈մաշա անես, չում տսնխինգյ սա̈հա՛թ էլ չիգյա̈ս:

Էն մեկէլ օր թակավրու կնիյ կէրթա̈:

Կասի. - Զուր վեց սա̈հա̈թ չեմ իգյա̈:

Վեց սա̈հա̈թ կանի տսվէրկու սա̈հա̈թ:

Կուգյա̈ տուն, աղչիկ մոր կասի. - Մարե՛, ընչի՞ ըսկնեմ ա̈նգյնցար:

Կասի. - Ա՛խ, քյո ծամեր կտրեմ, ես վա̈խենամ տյու էրթա̈ս՝ ըսկի էլ չի գյա̈ս:

Աղչիկ կէլնի էն մեկէլ օրն էլ ինքն կէրթա̈: Կէրթա̈,.թամաշա կանի էդա գյեոնդ կմտնի մեջ գյա̈մուն:

Խետ էն կմտնի մեչ գյամուն. լաճն ուշիկ-ուշիկ գյեոնդ պոնողներ կքյաշի ներս. չուր էն քյարսուն էօղեն կփոա, կուցյա, որ էլնի տյուս, լաճն գյամին քյաշե, խասե չում ծովու կես:

Գուզպար գյամին կտանի կխանի ուր քյավուրոչ երկիր:

Լաճն ի, էդա ճմեն աղչկներ, պառվներ. մարթեր կխանի տյուս. մենակ զինքյ աղչիյ ներս կմնան:

Կտիսնա. որ էտա Սութ Գազպարն ըռովըլն լցե դրե ուր մեճուց մեչ. իկե կայնե էնտեղ, որ Գազպարն էլնի տյուս զանի:

Գուզպար կէրևա-չէրևա, Սութ Գազպարն կզանի, աման լաճուն չդեպնե, մենակ խելքյամաղ կէլնի կինի:

Բյություն կասեն Սութ Գուզպարին. - Տյու ծոու՞ր. քյե աղեկութեն արաց, տյու ընչի՞ սկնձ արիցիր:

Գազպար կէլնի վեր կասի. - Տյու չիր էրդվե՞, որ ես չուր մեռնելու ժամանակ չասեմ քո էութեն: Մկա ես մեռա, նոր յձրա. դեոր տ'ասեմ:

Կբոռա. - Ժողովու'րդ, թակավո'ր ականջ արեքյ, ես որ կամ՝ թակավրու սանիկն եմ, իմ անուն ի Գձզպար: Էսա որ կա, թակավո'ր. էն խալիվոր մարթն ի, որ տյու ասիր իր, թե ճյուր չուզես ինորից, քյե վնաս կուցյւս ինորից: Ես քյո խոսքյ չարի. ծարավին չդիմացա, ճյուր ուզեցի: Էսա մարթ զի մտուց ճրի խոր. իմ բձզբանդ խաչնշանն առեց, զի էրտյում իտուր. որ չում իմ մախ ես մեկիմ չասեմ:

Թակավոր, որ էսա կլսի, կուտա Սութ Գձզպարին կտանեն ջձլձղներ կսպանեն:

Աղչիյն կտանի փսակի վեր էն լաճուն, ուր թակավրութնի կեսն կուտա լաճուն: Յոթ օր. յոթ կիշեր խարսնիս կանեն:

Ինոնք կխասնեն ուրենց մուրազին, տյուքյ էլ՝ ծեր: